

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարվանը 6 ռուբլի... Առանձին համարները 7 կոպեկով...

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ...

Մեր հասցեն. Тифлисъ. Редакция «Мшакъ»... կամ Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ... (բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով...

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպեկ...

ՄՇԱԿ

Հ Ի Մ Ն Ա Գ Ի Ի Ր Գ Ր Ի Գ Ո Ր Ա Ր Ծ Ր Ո Ւ Ն Ի

ԲՈՎԱՆԻՎԱԿՈՒԹԻՒՆ

Պետերբուրգի ժողովները... Ներքին Տեսչութիւն... Վոլկոստան կառավարչապետի շրջաբերականը...

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԺՈՂՈՎՆԵՐԸ

Առաջիկայ սեպտեմբեր և հոկտեմբեր ամիսներին Պետերբուրգում տեղի են ունենալու մի քանի ժողովներ, որոնց քննութեան առարկաներ լինելու են այնպիսի խնդիրներ, որոնք մեծ հետաքրքրութիւն և նշանակութիւն ունեն մեր երկրի արդիւնաբերողների համար:

Սեպտեմբերին կայանալու է զինագործների ժողով, որը պետք է զբաղվի զինագործութեան զարգացման միջոցների քննութեամբ... Այդ ժողովում քննութեան պէտք է ենթարկվի նաև մի խնդիր, որը ահա չորս-հինգ ամիս շարունակ խօսակցութեան առարկայ է Ռուսաստանի զինագործական շրջաններում:— զա գիտու՛մ վրա ա կցի զ զինուոր խնդիրն է: Վերջապէս հոկտեմբեր ամիսին պէտք է կայանայ մի գագործների միջազգային ժողովը, որը պէտք է քննի այդ գագործների վերաբերեալ բազմաթիւ խնդիրները:

Սյր խնդիրները շոշափում են նոյնպէս կողմասեան արդիւնագործողների հակառակ հասերը, և եթէ նախօրոք միջոցներ ձեռք չառնվեն, այդ խնդիրները կարող են այնպիսի լուծում ստանալ, որ կողմասի տնտեսութեան զարգացման պայմանները, եզրակացութիւններ անելու ժամանակ, անտես կարող են առնվել:

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

Ս Ո Վ Ե Ա Լ Ն Ե Ր Ի Մ Է Ձ

III

Յաճախ մարդու բարկութիւնն է շարժում, երբ տեսնում է օրից օր աւելացող ճնշումները ու նեղութիւնները խոստափող ալաշկերպիկների, խնուսցիկների և երգողների այն բազմութիւնը, որ սահմանադիւններից մինչև այս կողմերը, իրանց օղորմելի կանանց ընկերութեամբ, շալակած, գրկած ու քարշ տալով լզար, խոճով մանուկներին, ոտաբոցիկ ու փոշեթափախ ման են զայլա նահանգի ամեն ուղղութեամբ:

Ամեն գիւղում, ամեն խճուղու, նոյն իսկ իւրաքանչիւր կածանի վրա դուք կը հանդիպէք այդպիսի խմբերի, որոնք կանգ են առնում, պարզում ձեռք իրանց ձեռքերը ու խոստում ձայնով ողորմութիւն խնդրում: Իրանց հետ են ամուսինները՝ սեպացած, աղջիկները պատառուտուն հագուստով, այդտեղ են զլեւաբաց ու ոտաբոցիկ խանձված դէմքով հիւանդոտ մանուկներ, որոնցից փոքրերը մօր մէջքի վրայից փոշու տակ հաղու են երևում:

- Որտեղացի էք, հարցնում էք նրանց:
—Նոսուցի, ալաշկերպացի...
—Ո՞ր էք գնում, ինչու էք գնում:
—Կերթանք հաց գտնելու...
Գնում են... մարդու զայրոյթն է գրգռվում:
Ո՞վ է զրանց կանչողը, ո՞ր են գնում դէպի խորքերը, ինչ բանի վրա յոյս դրած: Եւ երբ մտան են և իրանց ետևներից էլ զեռ քարշ տալու ուրիշ հարկաւորներին...

Այդպիսի գրգռված արամադրութեան մէջ էի, երբ հանդիպեցի մի վանեցի քահանայի՝ Ծերունի

Արգարե, եթէ Պետերբուրգում հեշտ կերպով վճռեն, որ զինու վրա աղցիկ զընելը ամենևին չի փաստի զինագործութեան զարգացմանը և նոյն իսկ կը նպաստի նրան, այն ժամանակ միևնույն ժամանակ հիմնվելով մի այդ տեսակ վկայութեան վրա՝ կը սահմանի աղցիկ, որի հեռաւոր ձայնն անզամ սարսփեցնում է մեր այգեգործներին:

Ովքեր են մեր այգեգործները, մեր զինի արդիւնաբերողները:—Ոչ թէ մի քանի խոշոր կալուածատէրեր, այլ գլխաւորապէս դեղագործներ, մանր արդիւնաբերողներ: Վերջիններիս համար այգին և նրա տուած եկամուտը ունի ոչ թէ շաղկապութեան նշանակութիւն, այլ կազմում է նրանց ապրուստի միջոցի էական մասը: Եւ տեղը միայն այգով են ապրում և առանց նրա տուած եկամուտի, զրկված կը լինէին ապրուստի միակ միջոցից:

Մեր երկրում այգեգործութիւնը և զինագործութիւնը զարգացնելու համար դեռ անհրաժեշտ են նպաստող միջոցներ և դիւրութիւններ, թէ արդիւնաբերելու և թէ վաճառահանրելու պայմանների մէջ, մանաւանդ որ այգեգործութեան փաստող հանգամանքները ոչ միայն չեն պակասում, այլ տարեց տարի աւելանում են: Ֆիլիսոփայական տարածվում է յամուտութեամբ, երևացել են միլիոն անտրախոզ և այլ վտանգաւոր հիւանդութիւններ:

Եւ մի այդպիսի ժամանակ դեռ ծրարել է առաջարկվում աղցիկ դնել զինու վրա: Մինչդեռ Պետերբուրգի ժողովներ այս և սրա նման խնդիրներով պէտք է զբաղվեն, կողմասի այգեգործները, զիւղատնտեսները զուցէ չեն էլ մտածում մասնակցելու այդ ժողովներին:

Ընդհակառակն, քննվելիք խնդիրների մշակ

էր, քիչ կու՛յ եկած, վերաբերու՛ն կարկանտ էր ու հնամաշ, գլխին մի հին կեպիւրազ և ոտներին ծանր ու մաշված կոշիկներ: Նա գնում էր՝ շքեղապատված 5—6 հայրենակիցներով: Երեք նորեկ էր, պատմում էր «Երկիր» զրուցեան մասին, իսկ հայրենակիցները լուռ էին: Ոմանք զինները թափ էին տալիս, ուրիշների աչքերում արտասուք էր փայլում, իսկ եզերքը ետևից տանում էին մի քանի կանանց և մանուկներին, որոնք ձենհերով էին կիլիչ արևի տակ: Ծօտէի փոշին անտանելի էր, սակայն քահանան տաքացած էր և ուշադրութիւն չէր դարձնում զրանս Պատմում էր, բառեր և երևակայութիւն շատ ուճեր նա: Նկարագրում էր փայլուն գոյններով, գծում էր աղբարար տեսարաններ: Պատմում էր, թէ ինչպէս բռնեցին Ալալթում՝ կարօին, —որին երևի բոլորը ճանաչում էին, —բռնեցին քերթերը, կապեցին մի ծառի, նիզակներով նախ նշան խիցցին՝ նրա մարմին վրա, յետոյ սրբով յօշոտեցին մարմինը և վերջ է վերջը վառելով ծառի արմատի մօտ մի խարոկ, այրեցին հայ քաջին, որի միակ պանթիլին, ոչ միայն պարբերաբար տուրքեր են առնում քերթերից մէկին սպանել և միւսներից էլ խուսափել:

Պատմում էր քահանան, թէ որպիսի գազանութեամբ ու բարբարոսութեամբ են սպանում քերթերը, թալանում ու այրում. թէ որքան զուարճութեամբ են կատարում նրանք իրանց արշաւանքները, որպիսի պատարաստութիւններով թէ ինչպէս նրանք բաջալերում էին իրանց հետ բռնած պատանիներին՝ նշան առնել զիւղացի մանուկներին, նիզակով և սրբով վարժութիւն անել ձերբակրիկների վրա...

Պատմում էր, թէ որպիսի անգթութեամբ մազերից բռնած քարշ են տալիս կանանց իրանց ետևներից, ծծկեր մանկանց ոտներից բռնած՝ զըլուխը ջրաջրախում քարերի վրա... Էլ չեմ յիշում մանրամասն, թէ ինչեր էր պատմում ձերբունի

քահանան: Նա խօսում էր յուզված, զողորմուն ձայնով: Չէր արտասուք, այլ ևս արտասուք չուէր, կենացի մէջ շատ բան էր տեսել, շատ էր լացել... —Մենակ վաստակական նահանգը, —ստաց նա —արշաւանք է կրում 30—40 քրդական ցեղերից, այսինքն մօտ 50,000 անգուսպ, զինված և յափշտակութեան սովոր քերթերից: Բռնած բարձրադիր մասերը, ամառը վրանաբնակ և ձմեռը զիւղերով բռն գրած, նրանք թէ և ունեն խաչն, բայց երբ երկրագործութեամբ և արհեստներով չեն զբաղվում, ինչպէս կուզէիք, որ իրանց ոչ խարսիկի տուածովը բաւականանային, եթէ չունենային եկամուտի ուրիշ աղբիւրներ: Եկամուտի այդ առատ աղբիւրները ահա կազմում են դաշտաբնակ հայերը և նոյն իսկ այն սակաւաթիւ ասորիները, որոնք անխելքութիւն են ունեցել զալ բնակիլը Վանի ծովի շրջակայքում...

Քիւրդերը զինված ոտից մինչև գլուխ, լաւ ձիերի տէր, բոտոն էլ գրեթէ պաշտօնապէս տէր լաւ հրացանների, միւս կողմից էլ ունենալով պաշտպանութիւն, ոչ միայն պարբերաբար տուրքեր են առնում քերթերից, այլ իրանց զուարճութիւնն է կազմում խմբերով իջնել այնտեղ, դարձնել գիւղը կուր վարժութիւնների համար մի վայր... —Բա՛ջ, պատերազմիկ ու խրոխտ ցեղեր են այդ քերթերի ազնիւ ցեղերը, որոնք բռնում են Արմենիայի լեռները...», ահա թէ ինչ է կարգում մարդ միշտ եւրօպայի ճանապարհորդների գրուածքներում, սկսած Երկրի Յեղիկի հռչակաւոր աշխարհագրութիւնից մինչև Լէկկերիկի, Եանտրի և միւս ճանապարհորդների գրքերում: Ոչ մէկն էլ սխալ չէ դրանցից, թէ և քիչ չափազանցած է: Քիւրդը քաջ է, հուժկու, վայելուչ հասակով, շքեղ դէմքով ու վեհանձն արտայայտութիւնով: Արտատ է նա, մանր արհամարհող, ինքնահաւան է և նշանաւոր զինավարժ: Միջին դա-

կութեան մէջ նրանց մասնակցութիւնը շատ և շատ կարեւոր է: Ուստի պէտք է բոլոր միջոցները գործ դնել, որ մեր այգեգործների և գիւղատնտեսների կարծիքը և ձայնը լսելի դառնան այն շրջանների համար, որոնցից կախված է ժողովների վճիռներին գործնական նշանակութիւն տալը:

Ով կարող է, պէտք է Պետերբուրգում մասնակցի այդ ժողովներին, իսկ ով միջոց չունի, նա կարող է Գիւղատնտեսական ընկերութեան միջոցով կամ առանձին թղթով յայտնել իր կարծիքը:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԿՈՎԿԱՍՏԱՆԻ ԿԱՌԱՎԱՐՁՊԵՏԻ ԾՐԱՐԵՐԱԿԱՆԸ ՀԱՅՈՑ ԳՊՈՐՑՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Նահանգապետներն ուղարկված է կովկասեան կառավարչապետի հետեւալ շրջաբերականը.

«1884 թիւ փետրվարի 16-ին բարձրագոյն հասանութիւն ստացած՝ կովկասի հայ-լուսաւորչական եկեղեցական դպրոցների վերաբերեալ կահունների հիման վրա, այդպէս կարող են աւելանալ միայն այն հանրակրթական տարրական միջոցներ և երկրասեան դպրոցները, որոնք գտնվում են հայ-լուսաւորչական դասնութեան եկեղեցիներին և վանքերին կից և պահպանվում են կամ բացառապէս եկեղեցական և վանքական գումարները հաշուի կամ ծխակալանների օժանդակութեամբ:

Այն ինչ, ստացած տեղեկութիւնների համեմատ մի քանի հայ դպրոցներ Անդրկովկասեան երկրում, որոնք հայ-լուսաւորչական հոգեւոր իշխանութիւնը եկեղեցական դպրոցներումն է տալիս, պահպանվում են բացառապէս տեղական գիւղական հասարակութիւնների միջոցներով հա-

քահանան: Նա խօսում էր յուզված, զողորմուն ձայնով: Չէր արտասուք, այլ ևս արտասուք չուէր, կենացի մէջ շատ բան էր տեսել, շատ էր լացել... —Մենակ վաստակական նահանգը, —ստաց նա —արշաւանք է կրում 30—40 քրդական ցեղերից, այսինքն մօտ 50,000 անգուսպ, զինված և յափշտակութեան սովոր քերթերից: Բռնած բարձրադիր մասերը, ամառը վրանաբնակ և ձմեռը զիւղերով բռն գրած, նրանք թէ և ունեն խաչն, բայց երբ երկրագործութեամբ և արհեստներով չեն զբաղվում, ինչպէս կուզէիք, որ իրանց ոչ խարսիկի տուածովը բաւականանային, եթէ չունենային եկամուտի ուրիշ աղբիւրներ: Եկամուտի այդ առատ աղբիւրները ահա կազմում են դաշտաբնակ հայերը և նոյն իսկ այն սակաւաթիւ ասորիները, որոնք անխելքութիւն են ունեցել զալ բնակիլը Վանի ծովի շրջակայքում...

Քիւրդերը զինված ոտից մինչև գլուխ, լաւ ձիերի տէր, բոտոն էլ գրեթէ պաշտօնապէս տէր լաւ հրացանների, միւս կողմից էլ ունենալով պաշտպանութիւն, ոչ միայն պարբերաբար տուրքեր են առնում քերթերից, այլ իրանց զուարճութիւնն է կազմում խմբերով իջնել այնտեղ, դարձնել գիւղը կուր վարժութիւնների համար մի վայր... —Բա՛ջ, պատերազմիկ ու խրոխտ ցեղեր են այդ քերթերի ազնիւ ցեղերը, որոնք բռնում են Արմենիայի լեռները...», ահա թէ ինչ է կարգում մարդ միշտ եւրօպայի ճանապարհորդների գրուածքներում, սկսած Երկրի Յեղիկի հռչակաւոր աշխարհագրութիւնից մինչև Լէկկերիկի, Եանտրի և միւս ճանապարհորդների գրքերում: Ոչ մէկն էլ սխալ չէ դրանցից, թէ և քիչ չափազանցած է: Քիւրդը քաջ է, հուժկու, վայելուչ հասակով, շքեղ դէմքով ու վեհանձն արտայայտութիւնով: Արտատ է նա, մանր արհամարհող, ինքնահաւան է և նշանաւոր զինավարժ: Միջին դա-

րի ազնականութեան օրինակն է նա Ասիայում: Բայց ինչու է նա այդպէս. ինչ հանգամանքներ են որ նրանց, այդ լեռնային վայրերին ու կոպիտ ցեղերին, հասցրել են Ֆիլիքական այդքան աչքի դարձող համեմատական կառարկութեան, որի վրա դմայվում են եւրօպացի ճանապարհորդները և նախանձում հայերը:

Այդ բոլորը պատրաստել է ինքը հայը: Եթէ քերթը քաջ է, իր քաջութիւնը նա հային է պարտական. եթէ գեղեցիկ է կազմուածքով, նա այդ հայից է ստացել. եթէ նրա կիւր սիրուն է, առողջ հայն է, որ նրան հասցրել է այդ բարձրութեան: Հայը ազնուացրել, քաջացրել է քրդին իր ստրկական վարժութեամբ, իր ստորաբար խոնարհական հրկեամբ:

Քիւրդը և նրա կիւր եթէ գեղեցիկ են, վայելուչ և առողջ կազմուածք ունեն և լաւ սերունդ են տալիս, դրա պատճառը այն է, որ վաղուց ի վեր—մի քանի սերունդ շարունակ—հայերի բոլոր գեղեցիկները, առողջներն ու ընտիրները ջերդերին են անցնել: Լեռների մէջ ազատ օդ ծծող, մարմնամարզական կրթութիւնների մէջ ապրող վայրենի, խաչնարած ժողովուրդը խառնվել է դաշտային սիրուն, նուրբ և վայելուչ հայ կնոջ հետ, ու այդպիսով առաջացրել է մի նոր սերունդ, քաջասիրտ, ազատասէր, գեղեցկադէմ, թոյնելուկ որ ցածում մնացող ժողովուրդը այդպիսով կազմված լինի միմիայն թոյլ, սպիկար ու ստրկական ոգով անդամները, որոնք բնականապէս պէտք է ընկնելին ընտիր ու հզոր սերնդի ազդեցութեան տակ և նրան կերակրող ամբոխը կազմէին միայն:

Կատարվել է այդպիսով, ար ու ե ս տ ա կ ա ն թէ բնական ընտրականութիւն (election) Վրդ ընտրականութիւնը կրկնվում և շեշտվում է նոյն իսկ այժմ. թիւրքն անզամ իր կողմից կամեում է է այդպիսով թարմացնել իր այլապես-

սարակական այնպիսի վճիռների հիման վրա, որոնք կազմված են առանց վարչութեան գիտութեան, իսկ այդ ուսումնարանները պահպանելու համար եկեղեցիները իրանց եկամուտներից ոչինչ չեն տալիս. այդ տուրքը առնվում է հարկերի հետ միասին, բայց աւելի խստութեամբ, և վերջապէս, հաւաքված փողերը առանց որ և է կօնսորվի վարչութեան կողմից, ծախսում են հասարակութիւններից ընտրված անձինք, որոնք դպրոցների հոգաբարձուներ են կոչվում:

Ուշադրութեան առնելով այն հանգամանքը, որ ամբողջապէս հասարակական գումարներով պահվող դպրոցները չը պէտք է եկեղեցական դպրոցների հետ համեմատվեն, որովհետև, վերջինից կանոններ հիման վրա, եկեղեցական դպրոցներ կարող են անուանվել միայն այն ուսումնարանները, որոնք ծխակալաններից միայն օժանդակութիւն են ստանում ի լրումն եկեղեցական կամ վանքական գումարների—և գտնելով, որ չէ կարելի թոյլ տալ, որ ամբողջ հասարակութիւնը պարտաւորվի միջոցներ տուրն բացառապէս հայոց եկեղեցական դպրոցները պահելու համար, և ի նկատի առնելով այն, որ այդ կերպ վարվելով հասարակութիւնները (որոնց շրջանում կարող են լինել և ոչ ծխակալաններ հայ-լուսաւորչական եկեղեցիներին) զրկվում են բոլոր դասնութիւններին պատկանող մասուկների համար ընդհանուր հիմունքներով սովորական տարրական դպրոցներ բանալու հնարաւորութիւնը,—կովկասեան դիւխաւոր վարչութիւնը անհրաժեշտ է համարում յայտնել կացուցանել հայոց եկեղեցական բոլոր դպրոցների պահպանութեան աղբիւրները կովկասում, պատշաճաւոր միջոցներ ձեռք առնելով, որպէս զի դադարեն եկեղեցական անուանվել այն դպրոցները, որոնք միջոցներ են ստանում ոչ թէ եկեղեցական կամ վանքական գու-

րի ազնականութեան օրինակն է նա Ասիայում: Բայց ինչու է նա այդպէս. ինչ հանգամանքներ են որ նրանց, այդ լեռնային վայրերին ու կոպիտ ցեղերին, հասցրել են Ֆիլիքական այդքան աչքի դարձող համեմատական կառարկութեան, որի վրա դմայվում են եւրօպացի ճանապարհորդները և նախանձում հայերը:

Այդ բոլորը պատրաստել է ինքը հայը: Եթէ քերթը քաջ է, իր քաջութիւնը նա հային է պարտական. եթէ գեղեցիկ է կազմուածքով, նա այդ հայից է ստացել. եթէ նրա կիւր սիրուն է, առողջ հայն է, որ նրան հասցրել է այդ բարձրութեան: Հայը ազնուացրել, քաջացրել է քրդին իր ստրկական վարժութեամբ, իր ստորաբար խոնարհական հրկեամբ:

Քիւրդը և նրա կիւր եթէ գեղեցիկ են, վայելուչ և առողջ կազմուածք ունեն և լաւ սերունդ են տալիս, դրա պատճառը այն է, որ վաղուց ի վեր—մի քանի սերունդ շարունակ—հայերի բոլոր գեղեցիկները, առողջներն ու ընտիրները ջերդերին են անցնել: Լեռների մէջ ազատ օդ ծծող, մարմնամարզական կրթութիւնների մէջ ապրող վայրենի, խաչնարած ժողովուրդը խառնվել է դաշտային սիրուն, նուրբ և վայելուչ հայ կնոջ հետ, ու այդպիսով առաջացրել է մի նոր սերունդ, քաջասիրտ, ազատասէր, գեղեցկադէմ, թոյնելուկ որ ցածում մնացող ժողովուրդը այդպիսով կազմված լինի միմիայն թոյլ, սպիկար ու ստրկական ոգով անդամները, որոնք բնականապէս պէտք է ընկնելին ընտիր ու հզոր սերնդի ազդեցութեան տակ և նրան կերակրող ամբոխը կազմէին միայն:

Կատարվել է այդպիսով, ար ու ե ս տ ա կ ա ն թէ բնական ընտրականութիւն (election) Վրդ ընտրականութիւնը կրկնվում և շեշտվում է նոյն իսկ այժմ. թիւրքն անզամ իր կողմից կամեում է է այդպիսով թարմացնել իր այլապես-



յանդգնում են վեհափառին ասել, որ սաստիկ յուզված է կաղզուանի ժողովուրդը և եթէ Յովհաննէս քահանային չը ներվի, պատրաստ է ժողովուրդը կրօնափոխ լինելու և այլն և այլն:

Հարցնում ենք. ինչու համար: Որպէս զի դարձեալ կրօնական սրբավայրում արձագանք տան յիշոցները, որ նրա օր ինակից քաջաբերված տան անգամ աւելի անկարգութիւններ անեն միւս քահանայները: Կսեցէք, ժողովուրդը մի օր և է տէր-Յովհաննէսի համար պատրաստ է այս և այն եկեղեցու գիրկն ընկնել:

Այդպիսի բան չը կայ այստեղ և չէ էլ կարող լինել:

ՆԵՐՒԻՆ ԼՈՒՊԵՐ

Երէկ երկկոյնան, օգոստոսի 4-ին, Սուրբնեան եպիսկոպոսը, իր նախագահութեամբ, Ներսիսեան դպրոցի հին հոգաբարձուներէն մի նիստ կազմեց, աեսուչ ընտրելու համար: Նիստին եկել էին՝ պ. պ. Միքայէլ Յամամեան, Աբգար Յովհաննիսեան, Թակոբ Տէր-Յովհաննիսեան և Գէորգ Աբելմեան, ուրեմն 12 հոգաբարձուներէն միայն 4 հոգի: Նիստի սկզբին պ. Յամամեան յայտնեց, որ ինքը բողոքում է այդ նիստի դէմ, որովհետև 4 հոգու ներկայութեամբ անկարելի է ժողովը կանոնաւոր համարել, և բացի դրանից, աչքի առաջ ունենալով նոր հոգաբարձութեան ընտրութիւնը, յի մասնակցի տեսչի ընտրութեամբ: Առաջնորդը յայտնեց, որ ինքը նախաձեռն է համարում և երեք հոգաբարձուի մասնակցութեամբ ընտրութիւն անել, և ձեռնարկեց տեսչի ընտրութեան: Ներկայ եղողները և բեք հոգաբարձու (3 ձայն) և նախագահը (մէկ ու կէս ձայն), ուրեմն ընդամենը 4 1/2 ձայնով ընտրեցին տեսուչ Սեդրակ Մանգիսեանին: Նիստից առաջ պ. Աբելմեան հեռագրով հարցրած է եղել Մանգիսեանի համաձայնութիւնը և նա շտապել է յայտնել, որ համաձայն է: Արձանագրելով այս փաստը, մենք միայն մի բան կանխեցինք. — եթէ կան մարդիկ, որոնք կարծում են, որ 4 1/2 ձայնով կարելի է տեսուչ ընտրել և այդ ընտրութիւնը օրինաւոր համարել, այն ժամանակ ուրիշ ոչինչ չէ մնում, բայց եթէ դպրոցի կանոնադրութիւնը առ ոչինչ համարել:

Մեզ հարողում են, որ թիֆլիսի թիւրքաց հիւպատոսը, հրապարակելով իր մօտ մի քանի թիւրքաց հայապատակ հայեր, առաջարկել է նրանց հանդուսակութիւն բանալ թիւրքացապատակների մէջ յօդուտ կ. Պոլսի երկրաչարքից վնասվածներին: Անկասկած, դա մի մարդասիրական գործ է, որին ամեն մարդ պէտք է վերաբերվի սիրով և համակրանքով: Սակայն, ինչպէս մենք լսում ենք, թիֆլիսում գտնվող թիւրքացապատակ հայերը տրամադրութեամբ չունեն ձեռնարկելու մի այդպիսի հանդուսակութեան, հաւատացած լինելով, որ փողերի մի քանորդ մասն անգամ նպատակին չի հասնի:

Մեզ հարողում են էլ միմեծնց, որ այնտեղ լուրեր են տարածում, թէ Ներսիսեան դպրոցի նոր հոգաբարձութեան հաստատութեան թղթերը դեռ չեն ստացված վերաբանում: Այդ տեսակ լուրեր տարածողների նպատակն է, անկասկած, հաւատացնել, որ այդ թղթերը դեռ եւ գտնվում են թիֆլիսի առաջնորդի մօտ և այդ պատճառով էլ հաստատութիւնը ուշանում է: Սուտ է: Մեզ հաւատարի աղբիւրից հարողըն են, որ թիֆլիսի առաջնորդը, ընտրութիւնից երկու օր յետոյ, այն է յուլիսի 14-ին, արդէն ընտրութեան թղթերը ուղարկել է էլ միմեծն: Յանկարողները կարող են այդ լուրը ստուգել թիֆլիսի առաջնորդարանում:

Մեզ հարողում են, որ թիֆլիսի հայոց Հրատարակչական ընկերութիւնը յանձնել է մամուլին Արշակ Չօպանեանի «Պետրոս Գուրեան» անունով կենսագրական գիրքը, Մ. Գարաբաշեանի «Բնական պատմութեան» երկրորդ հատորը, և Յովհաննէս խան Մասէհեանի՝ անգլիերէն բնագրից թարգմանած «Երթարի» «Համկէտը»:

Մենք ստացանք հետեւեալ նամակ Բարեգործական ընկերութեան կարսի ճիւղի վարչութիւնից. «Յօդուտ կարսի գաղթականների յուլիսի 9-ին և 19-ին «Մշակի» խմբագրութիւնից ուղարկած գումարները՝ ընդամենը 300 բուրլի վարչութիւնն ստացաւ, որի համար պարտք է համարում յայտնել իր խորին նորոհակալութիւնը յարգելի խմբագրութեան և նուիրատուներին»:

Ներսիսեան դպրոցի նոր տեսչի ընտրութեան առիթով «Новое Обозрение» լրագիրը նոյնպէս զարմանք է յայտնում, որ հին հոգաբարձութիւնն է ձեռնարկում նոր տեսչի ընտրութեան: Լրագիրը իր նկատողութիւնը վերջացնում է այս խօսքերով. «Չի կարելի չը զարմանալ հին հոգաբարձուների անբեւութեան վրա, որ կամենում են իրանց յաջորդների շինքին փաթեթել անպատճառ «բրանց» մարդկանց»:

ՇՈՒՇՈՒՑ մեզ գրում են. «Կարա-Մուրդայի երկրորդ կօնցերտը անցաւ նոյն փայլուն աջողութեամբ, ինչպէս և առաջինը: Երեկոյնան տոմսակներ չը կային, դահլիճը լի էր: Այդպիսի աջողութիւն այստեղ գեւ ոչ չէ ունեցել: Հասարակութիւնը բուն ծափահարութիւններով ողջունում էր երաժշտագետին, ամեն մի երգ նորից կրկնել էր տալիս: Շուտով կը լինի երրորդ կօնցերտը, որը անկասկած նոյն չը տեսնված աջողութիւնը կունենայ: Խաւարի արքանեակները այժմ բոլորովին պայանծալ են, ընկճվել կատարվող իրողութիւնների տակ, և իրանց թըշուառ հոգուն մի բաւարարութիւն տալու համար ընդ ու պուճակներում զանազան յիմար բամբասանքներ են անում կարա-Մուրդայի անձնաւորութեան մասին: Խմբի մէջ մասնակցող օրիորդները երկրորդ կօնցերտին մի ընծայ մատուցին իրանց ուսուցչին, ապացուցանելով դրանով թէ ինչպէս արժամարձու են բամբասող հրէշներին»:

ԲԱԳՈՒԻՑ մեզ գրում են. «Բազուկաբանկ տիկին Նիխաբէթ Սարգսեան որոշել է՝ Շուշու մօտ գրանուիղ Հացի գիւղում հիմնել մի ծխական դպրոց, ի վերջոսակ իր հանգուցեալ ամուսնու»:

ՄՍՍՎԱՍԻՑ մեզ գրում են. «Բնակային գրասենեակի տէր Յովհաննէս Ժամարեանը առաջարկութիւն է արել Շուշու հասարակութեան բանալ այդ քաղաքում բնակային բաժանմունքը»:

ՆՈՒՈՒՑ մեզ գրում են. «Այն լրանում է մի ամբողջ ամիս այն օրից, երբ թեմական առաջնորդի հրամանով արձակվեց երկուսու դպրոցների ուսուցչական խումբը: Առաջ-ուսուցչի Գ. Թումանեան, եօթ տարեկան ընթացքում ձեռագործի և երկուսու դպրոցների դասական պիտոյքների վաճառումն իր ձեռքն առած լինելով, նորից պրոպագանդա հոգաբարձուների, այդքան ժամանակամիջոցում ոչ թէր հաշիւ չէր տեսել, որովհետև ոչ թէր կողմից էլ պահանջ չը կար: Սակայն երբ իմացվեց, որ խումբը ջրվում է մեր թմբած, ընդամենը հոգաբարձուները նոր սթափվեցին և մտածեցին, որ հաշիւ տեսնել պէտք է: Այս միջոցում տեղական յաջորդը նոր խումբ կազմելու՝ իսկ հոգաբարձութեան նախագահ քահանայն Բժշկիւղեւ պատրուակով թիֆլիս են գնում, բոլոր գործերը յանձնելով հոգաբարձուների սնօրնութեանը: Հոգաբարձութեան նախագահ տէր-Սիմօնը, թիֆլիս գնալուց առաջ՝ իր ձայնը պաշտօնական գրութեամբ յանձնել էր անձնափոխանորդ Ս. Խոջամիրեանին և այս մասին էլ գրաւոր յայտնել էր հոգաբարձութեան, հրահանգելով, որ չուտով ըստանան առաջ-ուսուցչից հաշիւները: Մի քանի օրից յետոյ պ. Խոջամիրեան հոգաբարձուների ժողով է հրաւիրում՝ առաջ-ուսուցչից հաշիւները պահանջելու: Որոշեալ ժամին ժողովը կայանում է: Բայց հոգաբարձուներից մէկը, որ Նուրում էլ շատ քիչ է լինում, փաստաբանում է այսպէս. «Որովհետև պ. Խոջամիրեան անձնափոխանորդ է և ոչ թէ հոգաբարձու, ուստի նա նախագահ լինել չէ կարող, և այդ հիման վրա եւ չեմ ձանաչում նրա նախագահական իրաւունքը»: Մի քանիսն էլ նրա հետ համաձայնվում են և այդ պիտով գործը երեսի վրա է մնում»:

ԵՐԵՒԱՆԻՑ մեզ գրում են. «Խարկովի մօտիկ ամառանոցում, Բաբայ գիւղում, յուլիսի 3-ին, լողանալու խեղդից խարկովի համալսարանի բժշկական ֆակուլտետի երկրորդ կուրսի ուսանող Տիգրան Բաղդկեանը: Հանգուցեալը բնիկ նոր-բայաղէտցի էր, վաճառականի օրից, աւարտած Երևանի գիմնազիան: Ներկայ տարում բոլոր աւարկանից աչոյ ընտրութիւն բանեւում, մնում էր միմիայն ֆիզիկոսիայից ընտրութիւն տալ, որը թողել էր աշնան տալու, ուստի որոշել էր հայրենիք չը վերադառնալ, այլ գնալ Բաբայ, ուր և զո՞ գնաց անգղուշութեան, 23 տարեկան հասակում: Խարկովի ուսանողները նրա վերջապահ յարգելու համար պատկեր դրին դադաղի վրա, Նոր-Բայաղէտի ընկերները հեռագրով իրանց ցաւակցութիւնը յայտնեցին վշտացած ընտանիքին: Երիտասարդը յայտնել էր ծանօթների չըջանում իր շիտակ ընտրութեամբ և ազնիւ զգացմունքներով: Նա խարկովի ուսանողների մէջ ամենալաւ հայերէն գիտեցողն էր և ուսանողական խմբի քարտուղարը: Նրա մահը մեծ ցաւ պատճառեց»:

ԳԱՐԱՉԻՉԱԳԻՑ մեզ գրում են. «Էլ երջին օրերում Գարաշիւղաբում և Նոր-Բայաղէտում յորդաւառ անձրևներ են տեղացել, որի նորից աղանձված արտերը կրկին կենդանութիւն են ստացել: Արաբանից նոյնպէս միթիթարիչ լուրեր են հասնում այստեղ»:

ՄԱՆԱԽԻՑ մեզ գրում են. «Շտապում ենք հաղորդել, որ այստեղ մտադրութիւն կայ բանալու մօտիկ ապագայում հայոց ժողովրդական գրադարան-ընթերցարան: Որպէս զի նախագահ գրադարան-ընթերցարանը աջողութիւն ունենայ վրացախօս հայերի մէջ, որովհետ է գնելը սահմանել ամենամատչելի, այն է՝ ամսական բաժանորդավճարը նշանակել 20 կօպ., մուտքը ընթերցարանում—1 կօպէկ, իսկ գրաւական չը վերցնել: Արդէն դիմել են նախագահական թոյլտուութիւն ստանալու»:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ ԿՈՐԵԱՅԻ ՀԱՐՅՈՂ Թէ եւրօպական և թէ ուսուցչ լրագրութիւնը իր ամբողջ էջերի մեծ մասը նուիրում է կօրէյական հարցին, որի պատճառով պատերազմ է ըսկսվել Եւրօպայի և Չինաստանի մէջ: Ռուսաց «Неделя» շաբաթաթերթն ևս մի առաջնորդող յօդուած է նուիրում այդ հարցին, որի հետ կախառնեք ճաղուածօրէն ծանօթացնել մեր ընթերցողներին:

Վօրէյական հարցը կարծես դիտմամբ լոյս աչխարհ եկաւ բոլորապէս հարցը բացատրելու և պարզաբանելու համար. բաւական է Բոլորիայի վերաբերմամբ ևս նոյնպիսի հայեցակէտն ունենալ, որպիսի հայեցակէտ ունի Ռուսաստանը կօրէյի վերաբերմամբ, նոյնպէս և Բուխարայի վերաբերմամբ, որ հարցը մեզ համար որոշ և պարզ լինի: Երկու դէպքումն ևս Ռուսաստանի համար միատեսակ նշանակութիւն ունի ոչ թէ վերջին Բուխարայի շտապ մեծ է և նրա համար շատ դժուար մինչև անգամ իր երկիրը կառավարելու և մնաց թէ նոր նուաճումներ ցանկանալ, մասնաւոր այնպէս հաստատ կազմակերպված և անմարս երկիրներ, որպէս են վերոյիշեալ պետութիւնները: Տանկելով ուժից վեր բեռ, պետութիւնը, որպէս և առանձին անհատը, վախ ունի ուժաւոր լինել կամ մնալ տեղն ու տեղը: Անհամեմատ աւելի շահաւէտ է թողնել փոքրիկ հարեան ժողովուրդներին ինքնավար լինել, յանձն չառնելով նրանց կառավարելու գլխացաւանքը և ծախսերը և հիմը կունենալով վախենալ նրանց ինքնավարութիւնից: Ոչ կօրէյան, ոչ Բոլորիայի երկրէ մեզ համար վտանգաւոր չեն կարող լինել, որքան էլ նրանք դարձան, և երբէք հարկ աւար չեն լինի ուսու ժողովրդի համար, որովհետև արդէն բնակեցրած են խիտ ազգաբնակչութեամբ: Իրաքանչիւր մեծ պետութիւն, որ հասել է բնական ծաւալի չափին, պէտք է վախենայ երկիրներ գրաւելուց, որոնց կու տալու յոյս չը կայ, որովհետև հենց այդպիսի նուաճումները պատճառ են դարձել մեծ պետութիւնների կործանմանը. — բաւական է իշխել հին հայաբնիկ միապետութիւնները՝ Պարսկաստանը, Ալեքսանդր Մակեդոնացու կայսրութիւնը, Հուսից, Բիւզանդիոնը, արաբական խալիֆաների և մոնղոլական նուաճողների կայսրութիւնները, վերջապէս Նապօլեօն 1-ի կայսրութիւնը»:

Վօրէյական հարցը կարծես դիտմամբ լոյս աչխարհ եկաւ բոլորապէս հարցը բացատրելու և պարզաբանելու համար. բաւական է Բոլորիայի վերաբերմամբ ևս նոյնպիսի հայեցակէտն ունենալ, որպիսի հայեցակէտ ունի Ռուսաստանը կօրէյի վերաբերմամբ, նոյնպէս և Բուխարայի վերաբերմամբ, որ հարցը մեզ համար որոշ և պարզ լինի: Երկու դէպքումն ևս Ռուսաստանի համար միատեսակ նշանակութիւն ունի ոչ թէ վերջին Բուխարայի շտապ մեծ է և նրա համար շատ դժուար մինչև անգամ իր երկիրը կառավարելու և մնաց թէ նոր նուաճումներ ցանկանալ, մասնաւոր այնպէս հաստատ կազմակերպված և անմարս երկիրներ, որպէս են վերոյիշեալ պետութիւնները: Տանկելով ուժից վեր բեռ, պետութիւնը, որպէս և առանձին անհատը, վախ ունի ուժաւոր լինել կամ մնալ տեղն ու տեղը: Անհամեմատ աւելի շահաւէտ է թողնել փոքրիկ հարեան ժողովուրդներին ինքնավար լինել, յանձն չառնելով նրանց կառավարելու գլխացաւանքը և ծախսերը և հիմը կունենալով վախենալ նրանց ինքնավարութիւնից: Ոչ կօրէյան, ոչ Բոլորիայի երկրէ մեզ համար վտանգաւոր չեն կարող լինել, որքան էլ նրանք դարձան, և երբէք հարկ աւար չեն լինի ուսու ժողովրդի համար, որովհետև արդէն բնակեցրած են խիտ ազգաբնակչութեամբ: Իրաքանչիւր մեծ պետութիւն, որ հասել է բնական ծաւալի չափին, պէտք է վախենայ երկիրներ գրաւելուց, որոնց կու տալու յոյս չը կայ, որովհետև հենց այդպիսի նուաճումները պատճառ են դարձել մեծ պետութիւնների կործանմանը. — բաւական է իշխել հին հայաբնիկ միապետութիւնները՝ Պարսկաստանը, Ալեքսանդր Մակեդոնացու կայսրութիւնը, Հուսից, Բիւզանդիոնը, արաբական խալիֆաների և մոնղոլական նուաճողների կայսրութիւնները, վերջապէս Նապօլեօն 1-ի կայսրութիւնը»:

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ Թաւրիզ, յուլիսի 19-ին Այժմ Արապատականի հայերը վերին սաստիճանի աննախանձելի դրութեան մէջ են: Չը գիտենք ինչին վերաբերել, սակայն այսքանը գիտենք, որ այս տարի ամեն հարց, ամեն խնդիր, ամեն դատ, օրինաւոր, թէ ապօրինի՝ վերջանում է յօդուած պարսիկների: Հայերը կողոպտվում են, սպանվում, իզուր տեղը աքսորվում—տէրութիւն անող չը կայ: Ստարազգիները, որ մի երկու տարի առաջ չէին համարձակվում «հայի հարկն քնն ասել», այժմ օգտվում են հանգամանքներից և ձեռքնորից եկած չարիքը չեն խնայում... Ժողովուրդը բոլորովին յուսահատվել է:

Վաղարշապատից դեռ ծանօթ էլ տեղական հանգամանքներին: Այդպիսի հարցերում աչքի ընկնող անհատները՝ Գորոյեան, Ֆէնքերեան, Նազարբէգեան, Մատուր-Խան, ինչ-ինչ պատճառներով դժգոհացած առաջնորդից՝ հեռացել են ապարիզից: Եպիսկոպոսը չըջապատվել է այնպիսի մարդկանցով, որոնք նրա վստահութիւնը բոլորովին խաբար են գործ դնում: Մի խօսքով Արապատականի հայը այսօր շատ ցաւալի վիճակի մէջ է: Երբեմն-երբեմն թէև թիֆլիսի մի քանի թերթերի մէջ տպվում են զանազան թղթակցութիւններ, թաւրիզից, որոնցով հարցրում են թէ այս ինչ և այն ինչ ազգային հարցերը լուծվեցան յօդուած հայոց՝ նորից նորին բարձր սրբազնութեանը, բայց այդ բոլոր թղթակցութիւնները կեղծ ու չինձու են, որոնցով հայկապատկերը կամենում են հանդուսալ սրբազանին. մինչդեռ ինքը, սրբազանը, շատ լքեալ և յուսահատ դրութեան մէջ է, որովհետև մինչ այժմ, բազմաթիւ ազգային հարցերից ոչ մէկը յօդուած հայոց չէ վերջացել: Շատ անգամ առաջնորդը հարցրու մի տեսակ ներգործիւններով կարողանում է սարդազամից այս ինչ հարցի լուծումն անել տալ յօդուած հայերի, բայց օրէնքի բացակայութիւն լինելով՝ պաշտօնեաները սարդազամի այդ վճիռը դնում են իրանց դօշալի տակը և ծանր նստում վրան: Նրանք, որոնք գործերին ծանօթ են, կառավարչական պաշտօնեաների հետ գիտեն վարվել, ինչպէս ասեցինք՝ հեռացել են սրբազանից, իսկ նրա մի քանի ուսուցչի և վաճառական բարեկամները, տեղական հանգամանքների հետ այնքան ծանօթ են, որքան ինքը՝ Սուքիաս արքեպիսկոպոսը: Հենց այս է պատճառը, որ ամեն ինչ թարս է գնում...

Այս մի տարեկան մէջ չորս թէ հինգ հայեր են սպանվել Արապատականում. բոլորի սպանուցներ էլ յայտնի են. ամեն օր այդ մասին խոսքեր են լսվում առաջնորդարան, բայց ոչ տէրութիւն անող կայ, ոչ էլ ուշադրութիւն դարձնող. և աւագակ մարդասպանները արձակ համարձակ մաս են գալիս նրանց գիւղերում: Այդ պայմաններից մէկը մի վանքի ուսուցչի էր, որին վերաբերել էր իրան թաւրիզ բերող շարվազարը, կողոպտելու դիտարկութեամբ: Թըշուառ ուսուցչից իր բերանով պատմել է թէ առաջնորդին և թէ դատարաններին, որ իրան վերաբողը այս ինչ գիւղացի, այս ինչ չարվազարն է: Մի-երկու օրից յետոյ խեղճ մեռաւ առաջնորդի ծառայի սենեակում, բայց մինչև այսօր վիրաւորողը չէ պատժվել:

Վարաղացից է ստվաստեցիները շարունակ ահազին խմբով գալիս են այստեղ և շաբաթներով առաջնորդարանի դռները մաշելուց յետոյ յուսահատ վերադառնում են իրանց գիւղերը: մինչդեռ զանազան պարսիկներ նրանց կառավարները յափշտակելով վախեցնում են: Անցեալ օրերը մի քանի հայեր, երկու տաճկի հետ, մի փոքր գիւղացի՝ երգելով անցնում են մի մզկիթի մօտից և կուր բռնվում մի պարսիկի հետ. խկոյն մէջից բազմաթիւ պարսիկներ դուրս են խուժում և այնքան ծեծում այդ հայերից մէկին, որ ուշափութում է, և ապա տանում բանտարկելու տալիս Միւս օրը վճում են այդ հային 200 ճիպոտ ֆալանայ զարկել և աքսորել Արազբէլից: Այդ մարդու բարեկամներից մէկը, մի ուսուցչից, որը և նախագահ է «Ար» ընկերութեան, անմիջապէս դիմում է առաջնորդին, որ մի ճար անել և բազմաթիւ գերդաստանի միակ կերակրողին ազատի: Արազբէլը առանց երկու բառ ուսուցչի հետ խօսելու՝ նրան դուրս է վաճառում: Նոյն օրը ֆալանայի են կապում նրան և ընտանիքն իր մասնակցով այդ վայրը գերդաստանով ներկայանում է Մուշէյիցին (պարսիկների հոգևոր պետը) և խնդրում նրա միջնորդութիւնը: Երեւանին սիրով ընդունելուց յետոյ՝ խոստանում է միջնորդել. բայց առ այժմ հայը դեռ բանտումն

է: Ուրիշ բազմաթիւ հարցեր կան, որոնք այսպիսի վատ դրութեան մէջ են: Ասում են, առաջնորդը տեսնելով իրերի այս դրութիւնը և իր անձեռն-հասութիւնը, յայտնել է, որ եթէ այդպէս շարունակվի ինքը մտադիր է հրաժարվել և հեռանալ այստեղից:

Տ-ցի

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

— Պարիզից հեռագրում են, որ կազմերի մաս-վան պատիճը նշանակված է օգոստոսի 4-ին (16-ին): Նրան կը գլխատեն Լիճի բանտի մօտ:

— Չինական կառավարութիւնը վճռել է պահանջել Նապոլիոնի 7 միլիոն օրպէս վարձատրութիւն «Կոն-Շինգ» նախ վրա սպանված չինացիների փոխարէն:

— Նէպոլից «Neue Freie Presse» լրագրին հարցրում են, որ այս օրերս Մատթեա և ուղարկվում 120 անարխիստներ, որոնք դատապարտված են քաղաքի Այդ անարխիստները քաղաքացիների առաջին կոյտիսան կը կազմեն անփրկական ափի վրա: Լրագրիները մի քանիսը, որոնց թւում «Mattino», պախարակում են կառավարութեան վճիռը, որով յայտնի անարխիստներն են քաղաքում: Աւելի վտանգաւոր են, լրագրիները կարծիքով, անյայտ անարխիստները, որոնք զարմնի են գործում: Գրե-խաւարայէս դրանց վրա պէտք է ուղարկութիւն դարձնել:

— «Ind. Belge» լրագրի Բերլինի թղթակիցը գրում է յուլիսի 22-ից, «Օտարոտի լուրեր են տարածվում այստեղ: Ասում են, որ Լոնդոնի, Պարիզի և Բերլինի միմիտրութիւնների մէջ բանակցութիւններ են շարունակվում, որոնց նպատակն է պաշտպանել օտար պարտատէրերի շահերը, որովհետև Յունաստանը չէ կամենում կամ չէ կարող վճարել իր տուած մուրհակների տու-կանները: Վերջինից երեք պետութիւնները վրձ-ուցին յետ կանգնել իրանց ներկայացուցիչներին Աթէնքից, և վերջապէս, որպէս վերջին միջոց, ծովային ցոյց անել Յունաստանի ափերի մօտ:

— Սօփիայում ապրող մակեդոնացի բուլղարները դիտարկութիւն ունեն Բերլինի դաշնագիրը ստորագրող պետութիւններին դիմել մի յայտագրով պահանջելով, որ վերջինից դաշնագիր 33 և 62 յոդուածներով խտտացված բէֆօրմները իրագործեն վերջապէս:

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՆՍԻՍԱՑԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԵՐ

ՄՇԱԿԱ, 1 օգոստոսի թագաւոր կայսրը, Մեծ Ինքնանուէր Կոնստանտին Աւետարանչալի պատ-կազմութեան առիթով, շնորհեց 7,143 ռ. Մակ-վայի աղքատներին բաժանելու համար:

ՊԱՐԻԶ, 1 օգոստոսի: Անարխիստներին վե-րաբերեալ գործի համար դատի ենթարկված-ներից դատապարտված են, որպէս գողեր՝ Օրտիզ —15 տարով տաժանակիր աշխատանքներին և Շերիկոտի—8 տարով, նրանց համախոս Բերդանի —6 ամսով բանտարկութեանը:

ՇԱՆԿԱՅԱՑ, 1 օգոստոսի: Երազմական նաւա-տորը, որը ուրբաթ ուղարկուած էր Վէյ-Նայ-Վէյ, բաղկացած էր 26 կայմազարդ զբոյսակներից, որ-բան էին այդ թւում զինուորական նաւեր՝ անյայտ է: չինական նաւատորմը այնտեղ չէր, երազմա-կան նաւերը և չինական ամբողջութիւնները մօտա-ւորապէս 50 անգամ հրազեններ պարպեցին մի-մեանց վրա: Երազմական նաւատորմը յարձակում գործեց Արտուր նաւահանգստի վրա ուրբաթ ե-րկուշաբթի և ոչ Վէյ-Նայ-Վէյ, ոչ Արտուր նաւա-հանգիստը չը վնասվեցին ուղարկութիւնից:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 2 օգոստոսի: Օգոստոսի 5-ին հա-ղորդակցութեան ճանապարհների միմիտրը ճանա-պարհ է ընկնում գեպի Բոստով (Գոնի վրա) և Տագանրոգ: Այդտեղից վերադառնալուց յետոյ, ճանապարհ կընկնի Նիժնիով՝ Սիբիրի երկաթու-ղու արեւմտեան մասը մինչև Օմսկ՝ տեսնելու հա-մար: Կազմանի մայր-եկեղեցում, սերբիական Ալեք-սանդը թագաւորի ծննդեան օրվայ և չափահասու-թեան հասնելու առիթով, պատարագ մատուցվեց և մաղթանք կատարվեց, ներկայութեամբ արտա-քին գործերի միմիտրի օգնականի, սերբիական դեսպանի, սրբազան քաղաքական ընկերու-թեան անդամների, մաղթանքից յետոյ կրասով քա-հանան տուեց դեսպանին ս. Ալեքսանդր Նե-վադու պատկերը թագաւորին մատուցանելու հա-մար: Կէսօրից յետոյ 1 ժամին սերբիական դես-պանատան մէջ տեղի ունեցաւ բաւուտ:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՈՐՍՍ  
Օգոստոսի 2-ին  
Լոնդոնի վրա 10 ֆունտ արծէ . . . 93 ռ. 10 4

Բերլին վրա 100 մարկ	45 ռ. 62 1/2
Պարիզի վրա 100 ֆրանկ	36 » 92 1/2
Ոսկի	7 » 48
Մաքսային կուպոններ	149 » 50
Արծաթ	» »
Բորսային դիսկոնտ	5 » 7
Պետ. բանկի 5% տուես 1 շրջանի	» »
» » » 2-րդ	» »
» » » 3-րդ	» »
5% ոսկեայ բէնտա 1884 թ.	159 »
4 1/2% ոսկեայ փոխառութիւն	» »
Արեւելեան 5% փոխառ. 1-ին շրջ.	239 » 75
» » » 2-րդ	225 »
» » » 3-րդ	» »
» » » 4-րդ	» »
Ներքին 5% առաջին փոխառութ.	» »
» » » երկրորդ	» »
Պետական երկաթուղային բէնտա	101 » 75
4 1/2% բէնտա	» »
4% ներքին փոխառութեան	95 5/8 »
5% գրաւ. թղթ. ազն. կալ. բանկի Ազն. կալ. Պետ. բանկի խաղարկութ.	» »
Գրաւ. թղթ.	» »
4 1/2% վկայակ. գրաւ. հող. բանկի	93 » 25
4 1/2% գրաւակալութիւն կալուած.	» »
Պետ. կրեդիտ. ընկեր. մետալ.	152 »
» » » թղթադ.	» »
Պետերբուրգի քաղաքային կրեդիտ. ընկերութեան օրվազարկները	100 »
Մոսկվայի քաղաք. օրվազարկները	100 »
Օրվապի	101 »
Գրաւ. թղթ. Թիֆլիսի կալ. բանկի	» »
» » » Գրեկայիսի	» »
Ս. Պետերբուրգի բորսայի տրամադրութիւնը ամբար է:	» »

Խոնարհիք՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ԲԱԼԱՆՔԱՐ  
Հրատարակիչ՝ Մ. ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Ա.Ռ.Ա.ՋԻՆ ՄԱՍՆԱԻՈՐ ՀԻՒՆԴԱՆՈՑ

Բ. ՆԱԻԱՍԱՐԳԵԱՆԻ  
(Կուկիա, վ. օրոնցովի արձանի հանդէպ)

Հիւանդներին ընդունում են ամեն օր, բացի կիրակի օրերից:

- Ա. Ա. ՆԱԻԱՍԱՐԳԵԱՆ—11—12 ժ. վիրաբու- ժութեան և վեներական (սիֆիլիս) հիւանդու- թիւնների:
- Դ. Գ. ՉԻԿՈՎԱՆԻ—9—10 ժ. աչքի և նեար- ղային 5.
- Կ. Դ. ԲՈՒՐԿՈՎԱՅԻ—10—11 ժ. ներքին, երե- լանների և կանանց 5.
- Ա. Գ. ԳՈՒՐԳՈ—1—1 1/2 ժ. ակնաչի, կոկորդի, և քթի:
- Կին-բժիշկ ՏՈՒՐԲՈՎԻԶ—12 1/2—1 ժ. կանանց ց.
- Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—1—1 1/2 ներքին և երե- խայրոց 5.

ԵՐԵՎԱՆԵՐԸ

- Ա. Գ. ԳՈՒՐԳՈ—6—7 ժ. Սիֆիլիսի և մէզի ու սեռական օրգանների 5.
- Բ. Ա. ՆԱԻԱՍԱՐԳԵԱՆ—7—7 1/2 ժ.
- Ի. Ե. ՖԻՆԱՆՏԻՆՈՒՍ—7—7 1/2 ակնաչի, կոկորդի և քթի ու նեարդային 5. երկուշաբթի, չորեքշաբ- թի և ուրբաթ:
- Ա. Գ. ԳՈՒՐԳՈ քիմիական և խոշորացուցական հետազոտութիւններ է անում մէզի, խիւրի, ա- թեան, կաթի և այլն:
- Վճար 50 կ.: Համախորհրդի (կոմիտիտի) 7 օպերացիայի համար առանձին: Հիւանդանոցում ընդունվում են և ԳԻՇԵՐՈՒԹԻՎ ՀԻՒՆԴԱՆՆԵՐ:

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎՃԱՌԱՆՈՒՄՈՒԹ ԺԱՄԱՎՈՒԹ ԵՆ ԼԵՆՈՆ ՍԱՐԳՍԵԱՆԻ

- 1) «ԱՅՑ ԹԻՐԻԲԱՅ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ» 1890 թ.: Գինը 60 կոպ.
- 2) «ԺՈՂՈՎՐԻԿ ԿՐԹՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԸ ՄԵ- ՋԱՆՈՒՄ» 1890 թ.: Գինը 20 կոպ. (№ 88) 1—10

«Մշակի» անցեալ և այս համարի հետ տարածվում է իմ մի բրոշուրը՝ «Գարձեալ Մուրաճի» խմբագրին՝ վերնագրով: 1—1 ֆ. վարդազարեան

Ը ն կ ե Ր ու թ իւ ն  
**ԲՐՈՎԱՐ ԵՒ ԸՆԿ.**  
Հնարողներ  
«ԳԼԻՑԵՐԻՆԱՅԻՆ ՓՕՇԻԻ»  
չափազանց փափկացնում է և օգտա- կար է կաշուի համար:  
Չգուշանալ կեղծույթներից:  
(Ամիսը 1-ը) (№ 62) 3—10

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎՃԱՌԱՆՈՒԹԻՒՆԸ  
ԲԱՐՁՐԱԳՈՑԸ ՀԱՍՏԱՏՎԱԾ 1881 Թ.

# ՐՕՍՄԻԱ

Ապահովագրական ընկերութեան մէջ

ՀԻՄՆԱԿԱՆ ԵՒ ՊԱՀԵՍՏԻ ԴԱՄԱԳԼՈՒԹԻՒՆԵՐ 20,500,000 ՐՈՒՐԼԻ

Ընկերութեան տոկոսաբեր թղթերը պահվում են պետական բանկում:

Օրինակ: Ընտանիքի հարը, 34 տարեկան, ապահովագրում է 5,000 ռ., որ պէտք է տրվի կնոջը և երեխաներին անյայտադ մահից յետոյ: Այդպիսի ապահովագրութեան համար նա վճարում է երեքամսական պրէմիա 30 ռ. 80 կոպէկ:

Ապահովագրութիւնները ընդունվում են 1000-ից մինչև 100,000 ռ. դումար- ների մէկ անձի կեանքի համար:

Ընկերութիւնը ապահովագրում է առանձին շահաւէտ պայմաններ- ը ու վարտօնութիւններով հիւանդութեան և աշխատանքին անընդունակ լինելու դէպքում:

Ապահովագրական գումարը տրվում է և մահվան դէպքում տարափոխիկ հի-ւանդութիւնից, խօրեայից և այլն:

Յունվարի 1-ին 1894 թ-ի «Բոսիա» ընկերութեան մէջ ապահովագրված էին 28,246 անձինք 75,621,010 Րուբլի դրամազօղի:

Ապահովագրողները մասն ունեն ընկերութեան եկամտանքից:  
Ապահովագրողների դիվիդենտը 1893 թ-ի համար—12% է:

Ապահովագրութեան մասին յայտարարութիւնները ընդունվում են և ամեն տեսակ տեղեկութիւններ հարողովում են վարչութեանը Ս. Պետերբուրգում (Большая Морская, սեփական տուն, № 37), ընկերութեան Թիֆլիսի բաժնում (Сербиевская, д. № 6) և ընկերութեան գործակալութիւնների մէջ կայսրութեան բոլոր քաղաքներում: (№ 85) 2—15

Մ Օ Ս Կ Վ Ա Հ Ի Ի Ր Ա Ն Ո Ց  
Վ Ե Ր Ս Ա Լ

(Մեծ Դիմաքովի և Ստոլեշնիկով փողոցների անկիւնում, Չուկսինի տանը): Հիւ-րանոցը ունի ամեն տեսակ յարմարութիւններ և գտնվում է քաղաքի կենտրոնում, թատ-րոնների մօտ: Օրական 1 ռ. մինչև 10 ռ., ամսական 20 ռ. մինչև 170 ռ.: Կան բա- ժանմունքներ ընտանիքների համար և վանանքի ցանկացողների համար: (№ 87) 1—5

ԿՈՎԿԱՍԵԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆ  
**Մ. ԴԵ-ԼԱ-ՅԱՐ ԵՒ ԸՆԿ.**

Կատարում է հետևեալ օպերացիաները.

- 1) Տոկոսաբեր թղթերի ապահովութեամբ փոխառութիւն.
- 2) I, II, III խաղարկութեան տոմսակների վաճառումը, ԱՄՍԱԿԱՆ 5 ՐՈՒՐԼԻ ՎՃԱՐՈՒՄՈՎ.
- 3) Փոխանկազարեր է տալիս Ռուսաստանի զանազան քաղաքների վրա.
- 4) Ընդունում է ժամանակաւոր և մշտական աւանդներ.
- 5) Բաց է անում ընթացիկ հաշիւներ՝ չէկերով.
- 6) Ընդունում է in casso վէկետներ և ուրիշ զօղումէսներ:

Լիազոր՝ Ս. Պ. ՊԱՎԼՈՎ ԹԻՖԼԻՍ, Սերգիևիվայայ փողոց, № 1.  
Գանձակում գործակալն է՝ Նիկոլայ Կարամանովիչ ՕՏՆԵՍՈՎ:  
(№ 15) (Հ.) 26—50

Թաւրիզի «ԱՐԱՄԵԱՆ», ԵՒ «Ս. ԱՆՆԱՅԻ», ԵՐԿՍԵՆԻ ԳՊՐՈՑՆԵՐԻ Համար հարկաւոր են մի հմուտ հայ ուսուցիչ, որը պիտի վարէ նոյն դպրոցների տեսչական պաշտօնը, այլ և շաբա- թական 16 դաս. զաղդիական լեզուն պիտի աւանդէ միայն Արամեան դպրոցում Պայմանների համար խնդրվում է դիմել Թիֆլիսում պ. Ա. ՄԵԼԻՔ-Աղաբեանցին և պ. Խոսրով Արզումանեանցին: (№ 79) 8—8

Ազգիս վեհափառ Հայրապետը հրամայել է զործադրել հայկական դպրոցներում որպէս ձեռնարկ, իմ աշխատասիրած

«ՀԱՄԱՌՈՑ ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԴԱՍԱ- ԳԻՐԳԸ»:

Յայտնելով այս ի գիտութիւն դպրոցական վարչութեանց՝ խնդրում ենք ցանկացողներին առ այժմ դիմել ուղղակի մեզ այս հասցեով. ԹԻՖԼԻՍ, Նիկոլայեւեան փողոց, տուն № 45:

Գիրքը կազմած է և արծէ 1) հատով գնողներին 60 կ., 2) տասնից մինչև յիս- տուն գնողներին 55 կ., 3) յիսունից մինչև հարիւր գնողին 50 կ., 4) դպրոցական վարչութիւնից վկայված չքաւոր աշակերտներն ու աշակերտուհիները կարող են վճա-րել 40 կ.: ձեռնապարհածախսը գնողների վրա է:

7—25 (№ 81) Սարգիս քահանայ Բէգնազարեանց